ՀՏԴ : 929 : 947.925 Համբարյան

DOI: 10.54503/0135-0536-2026.2-275

ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

Լրացավ արևմտահայ ազատագրական շարժումների ու ագրարային հարաբերությունների պատմության նշանավոր հետազոտող, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Սարգսի Համբարյանի ծննդյան 100-ամյակը: Հոբելյան, որը, մեր կարծիքով, նույնիսկ մերօրյա խառնաշփոթի պայմաններում պետք է արժանվույնս նշվի, քանի որ հայ պատմագիտության մեջ զգալի վաստակի տեր, կյանքի դժվարին ուղի անցած ու լուրջ գիտական ձեռքբերումներ արձանագրած մարդ-անհատ-գիտնականի օրինակը շատ ուսանելի կողմեր ունի և կարող է օրինակ ծառայել գիտության ասպարեզն ընտրած երիտասարդ սերնդի համար:

Ա. Համբարյանը ծնվել է 1926 թ. հունիսի 8-ին Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի (նախկինում՝ Թիֆլիսի նահանգի Ախալքալաք գավառի Բոգդանովկա) շրջանի Սաթխա գյուղում:

1942 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը: 1942–1944 թթ. աշխատել է այդ դպրոցում՝ որպես ուսուցիչ: 1944 թ. ընդունվել և 1948 թ. ավարտել է Լենինականի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը՝ գերազանցության դիպլոմով: 1948–1949 թթ. աշխատել է նույն ինստիտուտում որպես պատմության կաբինետի վարիչ: 1953 թ. ավարտել է ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ասպիրանտուրան: Նույն թվականին հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:

1958 թ. աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: Եղել է այդ ինստիտուտի կրտսեր (1953–1959), ավագ (1959–1980) գիտաշխատող, ապա ղեկավարել է ինստիտուտի Նոր դարի պատմության բաժինը (1980 – մինչև կյանքի վերջ): Միաժամանակ դասավանդել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտում (1970–1978), Երևանի պետական համալսարանում (1985–1987) և մայրաքաղաքի այլ բուհերում:

1966 թ. Ա. Համբարյանը «Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856–1914)» թեմայով պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և նրան շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1976 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 1977–1983 թթ.

* Ներկայացվել է 14. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

եղել է Հայկական սովետական հանրագիտարանի հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության գիտաճյուղային խորհրդի անդամ: Իսկ 2000 թ. գիտության ասպարեզում լուրջ ձեռքբերումների համար ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Սկզբունքային պատմաբանը զգալի նպաստ ունի նաև գիտության ասպարեզն ընտրած շատ երիտասարդների խորհուրդներով օգնելու, ճիշտ ուղղություն ընտրելու և արգասաբեր գործելու առումով, որի առհավատչյան են այն մեծ թվով ատենախոսությունները, որոնք պաշտպանվել են Ա. Համբարյանի գիտական ղեկավարությամբ:

Լայն ու ընդգրկուն է Ա. Համբարյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Աշխատությունները վերաբերում են հայ ժողովրդի պատմության նոր շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ազգային-ազատագրական շարժումների և հասարական-քաղաքական մտքի պատմությանը: Առաջնային տեղ են գրավում նրա այն աշխատությունները, որոնք վերաբերում են Արևմտյան Հայաստանի ագրարային հարաբերություններին, XIX դարի վերջի ու XX դարի սկզբի ազգային-ազատագրական շարժումներին, արևմտահայության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական պատմությանը:

Շարունակելով այդ բնագավառներում իր նախորդների կատարածը՝ նա հիմնավորապես ուսումնասիրեց Արևելյան Հայաստանի տնտեսության պատմությունը: Պրպտող գիտնականը արխիվային և սկզբնաղբյուրների հարուստ այլ նյութերի հիման վրա գրված «Հայաստանի սոցիալ–տնտեսական հարաբերությունների համառոտ պատմությունը (XIX դարի երկրորդ կես – XX դարի սկիզբ)» (1983) աշխատությունում ներկայացրեց երկու դարերի սահմանագծում գտնվող Արևելյան Հայաստանի ոչ բարվոք վիճակը, վեր հանեց տնտեսական զարգացման ընդհանրություններն ու առանձնահատկությունները, մատնանշեց այն գործոնները, որոնք խթանում կամ կաշկանդում էին տնտեսության զարգացումը:

Միևնույն ժամանակ նշանավոր հետազոտողն իր մի քանի համախոհ գործընկերների հետ լուսաբանեց Հայաստանի բանվոր դասակարգի ինչպես ձևավորման, այնպես էլ քաղաքական ու հեղափոխական շարժումներին նրա ակտիվ մասնակցության պատմությունը: Ճիշտ է, նրանց հեղինակած ուսումնասիրությունը կրում էր ժամանակի իշխող կոմունիստական գաղափարախոսության քաղաքական պարտադրանքն ու ազդեցությունը, սակայն նաև թարմ ասելիք էր պարունակում և նոր խոսք էր այդ ասպարեզի մասին (տե՛ս՝ Համբարյան Ազատ, Մուրադյան Դերենիկ, Սիմոնյան Արամ, «Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն», 1988):

Անվանի պատմաբանը պարբերաբար անդրադարձել է նաև այնպիսի կարևոր բնագավառի, ինչպիսին ժողովրդագրությունն է: Ա. Համբարյանի բեղմնավոր գրչի արգասիք են պատմագիտության այդ ճյուղի այնպիսի արժեքավոր և ասելիքով հարուստ ուսումնասիրություններ, որպիսիք են «Արևելյան Հայաստանը 1916–1917 թվականների մարդահամարներում» (կազմող՝ Ազատ Համբարյան, 1992), «Ջավախքի ժողովրդագրության պատմությունից» (1998) և այլն:

Ա. Համբարյանն առաջիններից էր, որ խորհրդային միակուսակցական և գաղափարախոսական դոգմատիկ համակարգի պայմաններում ձեռնամուխ եղավ Արևմտյան Հայաստանի պատմության լուսաբանմանը: Շատ լավ հասկանալով, որ պատմագիտության հենքը նախևառաջ տնտեսությունն է ու դրան ածանցված մյուս բնագավառները՝ արդարամիտ հետազոտողը, հաղթահարելով բավականին լուրջ դժվարություններ և տարբեր աղբյուրներից կաթիլ առ կաթիլ նյութեր հայթայթելով, շարադրեց նաև Արևելյան Հայաստանի տնտեսությանը նվիրված մի քանի արժեքավոր աշխատություններ:

Նույն եռանդով և բարեխիղճ պատմաբանին վայել իրատեսությամբ արխիվային ու այլ աղբյուրների (որոնց մեծ մասն առաջին անգամ էին դրվում գիտական շրջանառության մեջ) հենքով Ա. Համբարյանն ընթերցողի դատին հանձնեց «Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856–1914 թթ.)» (1965) մենագրությունը, որն իրապես կարելի է համարել արևմտահայ գյուղացիության պատմության հանրագիտարան: Տարիների քրտնաջան ու հետևողական պրպտումների արդյունքում բարեխիղճ հետազոտողն ի մի է բերել Արևմտյան Հայաստանի շատ բնակավայրերի գյուղատնտեսությանը վերաբերող մեծ թվով փաստեր, համադրել ու համեմատել դրանք և կատարել շատ արժեքավոր եզրակացություններ: Դրվատելի է նաև այն իրողությունը, որ խորաթափանց ուսումնասիրողը հընթացս ներկայացրել է տարածաշրջանի գյուղացիության սոցիալ-տնտեսական ծանր դրությունը, միանգամայն իրական գույներով ցույց տվել, որ թուրքական իշխանությունների, կիսավայրենի քուրդ հրոսակների և զանազան այլ մակաբույծների ճիրաններում տառապող հայ գյուղացին հայտնվել էր անելանելի վիճակում ու հենց դրա անմիջական հետևանքը եղավ ազգային-ազատագրական պայքարի ծնունդը: Անաչառ պատմաբանը հարուստ փաստական աղբյուրների հիման վրա ցույց տվեց, որ թուրքական բռնատիրության ճիրաններում գալարվող հայ գյուղացին, այլ ելք չտեսնելով, իր անձը, պատիվն ու ինչքը պաշտպանելու համար ստիպված դիմեց զենքի: Այդ հիմնախնդիրների լուսաբանմանն են նվիրված «Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908–1914 թթ.)» (1979), «Արևմտյան Հայաստանի տնտեսությունը (1856–1914 թթ.)» (2003) և այլ աշխատություններ:

Ա. Համբարյանի ուսումնասիրություններում առանձնանում է արևմտահայ ազատագրական շարժումների, ինքնապաշտպանական մարտերի և ցեղասպանության պատմության հիմնահարցերի լուսաբանման թեման: Դրանց նա նվիրել է մի շարք աշխատություններ, որոնցից են՝ «Հայ հասարակական–քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)» (1990), «Արևմտահայերի 1915 թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը (պատմավավերագրություն)» (1990), «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898–1908 թթ.)» (1999), «Հայոց ցեղասպանությունը» (Համբարյան Ա., Ստեփանյան Ս., 1995) և այլն: Ընդգրկուն ասելիքով, խորաթափանց դիտարկումներով և բավականին անաչառ եզրահանգումներով առանձնանում է հատկապես վերը թվարկված վերջին մենագրությունը, որն իրավամբ կարելի է համարել հայ ազգային-

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

ազատագրական պայքարի ձևավորման, պատճառների, կարևոր իրադարձությունների և, հատկապես, այդ պայքարը ղեկավարելու հավակնություն ունեցող հայ ավանդական կուսակցությունների դերակատարության մասին ամփոփ տարեգիրք:

Անվանի գիտնականը մահացել է 2003 թ. Երևանում:

Նշենք, որ սկզբունքային քաղաքացու, հաջողված ընտանիքի հոր, ավագ գործընկերոջ և հատկապես բեղմնավոր գրչի տեր պատմաբանի հարյուրամյա հոբելյանը առիթ է ոչ միայն հիշելու ու մեծարելու նրա արժանավոր ներդրումը հայ պատմագիտության զարգացման, այլև երիտասարդ սերնդի դաստիարակության կարևոր գործում: Նաև ընդգծելու, որ նրա անցած արգասավոր ճանապարհն ուսանելի շատ կողմեր ունի, քանզի նրա շատ ու շատ գաղափարներ այսօր էլ կարևոր են ու արդիական:

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

Պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ ազգային-ազատագրական պայքարի, կուսակցությունների և մամուլի պատմություն: Հեղինակ է 16 մենագրության և ավելի քան 150 հոդվածի:
ORCID: 0009-0005-6171-9021. sargsyansuren@yandex.ru